«Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ 1) «ա» և «բ» կետերի համաձայն, 2005 թվականի հունվարի 1-ից ապրանքների, ծառայությունների, աշխատանքների գնման դեպքում դրանց դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափը միանվագ գնման դեպքում սահմանված է 300 հազար դրամ, իսկ մեկ ամսվա ընթացքում այդպիսի գործարքների համար՝ 3 միլիոն դրամ,

2) «գ» և «դ» կետերի համաձայն, 2012 թվականի հունվարի 1-ից ապրանքների, ծառայությունների, աշխատանքների դիմաց կանխիկ վճարումների ընդունման առավելագույն չափը (բացառությամբ մանրածախ առևտրի և ծառայությունների ոլորտում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից մինչև 3 միլիոն դրամի չափով միանվագ գործարքների դիմաց ընդունվող վճարումների) միանվագ գործարքի դեպքում սահմանված է 300 հազար դրամ, իսկ մեկ ամսվա ընթացքում այդպիսի գործարքների համար՝ 3 միլիոն դրամ:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, կանխիկ դրամով վճարումների կատարման և (կամ) ընդունման նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածով սահմանված առավելագույն չափերը չպահպանելու դեպքում գանձվում է տուգանք՝ կանխիկ դրամով վճարումների կատարման և (կամ) ընդունման թույլատրված չափը գերազանցող գումարի (խախտման գումար) 5 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը և ոչ ավելի, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը: Սահմանափակումների չպահպանելն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դրանք կրկին չպահպանելու դեպքում գանձվում է տուգանք՝ խախտման գումարի 10 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը և ոչ ավելի, քան սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկը:

Օրենքի վերոնշյալ դրույթների կիրառման հետ կապված հարցերի հստակեցման նպատակով, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2 -րդ

ԱՄՍԱԳՐԻ  
ՉՈՒՉԱԳՐԱԿԱՆ  
ՏԱՐԲԵՐԱԿ

ԱՄՍԱԳՐԻ  
ՉՈՒՉԱԳՐԱԿԱՆ  
ՏԱՐԲԵՐԱԿ

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՐ  
 Գ. Խաչատրյան  
 01 մարտի 2012 թ. N 12

## Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ 12

### «ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 8-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 5-ՐԴ ԿԵՏԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն, կոմիսիոնների կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի դեպքերում (բացառությամբ նույն կետով նախատեսված դեպքի) կոմիսիոնների կամ գործակալի մոտ ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն է համարվում կոմիսիայի կամ գործակալության պայմանագրի հիման վրա մատակարարված ապրանքի կամ մատուցված ծառայության ընդհանուր արժեքը (առանց ավելացված արժեքի հարկի), իսկ կոմիտենտի կամ պրինցիպալի համար ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն է համարվում հանձնարարության կամ գործակալության պայմանագրի հիման վրա մատակարարված ապրանքի կամ մատուցված ծառայության արժեքի (առանց ավելացված արժեքի հարկի) և համապատասխանաբար՝ կոմիսիոնների կամ գործակալի հասանելիք գումարի (առանց ավելացված արժեքի հարկի) տարբերությունը:

Օրենքի 15-րդ հոդվածի համաձայն, ավելացված արժեքի հարկից ազատելը հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է:

Օրենքի 31-րդ հոդվածի ընդհանուր կանոնի համաձայն, ավելացված արժեքի հարկ վճարողների կողմից հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման դեպքում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման գործարքների հետ կապված հարկային պարտավորության (ավելացված արժեքի հարկի հաշվարկման) ծագման պահ է համարվում այն պահը, երբ ապրանքները առաքվել կամ հանձնվել են գնորդներին կամ ծառայությունները մատուցվել են պատվիրատուներին:

Օրենքի վերոնշյալ դրույթների կիրառության հստակեցման նպատակով, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով՝ **պաշտոնապես պարզաբանում են.**

1) կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի դեպքերում ինչպես կոմիսիոնների կամ գործակալի, այնպես էլ կոմիտենտի կամ պրինցիպալի համար ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորության ծագման պահը որոշվում է վաճառքի համար նախատեսված ապրանքները կոմիսիոնների կամ գործակալի կողմից գնորդներին առաքվելու կամ հանձնվելու կամ ծառայությունները պատվիրատուներին մատուցվելու պահով:

2) որպես կանոն՝ կոմիտենտը, հանձնարարողը կամ պրինցիպալը համապատասխանաբար կոմիսիոնների, հանձնակատարի կամ գործակալի կողմից իրականացված գործարքի վերաբերյալ տեղեկացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 785-րդ, 800-րդ կամ 809-րդ հոդվածների համաձայն կոմիսիոնների, հանձնակատարի կամ գործակալի կողմից ներկայացվող հաշվետվության միջոցով: Հաշվետու ժամանակաշրջանում կոմիտենտի, հանձնարարողի կամ պրինցիպալի հարկվող շրջանառությունների և ավելացված արժեքի հարկի գծով պարտավորությունների՝ օրենքով սահմանված ժամկետում արձանագրումն ապահովելու նկատառումով կոմիսիոնների, հանձնակատարի կամ գործակալի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հաշվետվությունները պետք է ներկայացվեն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանց ներկայացումը հիմք չի կարող հանդիսանալ կոմիտենտի, հանձնարարողի կամ պրինցիպալի՝ ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորությունները օրենքով սահմանված ժամկետում չարձանագրվելու (պարտավորության առաջացման պահը տարաժամկետելու) համար:

3) հաշվի առնելով այն հանգամանքը, որ կապի կամ հեռահաղորդակցության ոլորտի օպերատոր համարվող հանձնարարողի կամ պրինցիպալի կողմից թողարկված լիցքավորման քարտերը համարվում են ոչ թե ապրանքներ, այլ կապի կամ հեռահաղորդակցության որոշակի տեսակից օգտվելու իրա-

ԱՄՍԱԳՐԻ  
ՉՈՒՉԱԳՐԱԿԱՆ  
ՏԱՐԲԵՐԱԿ

# Հ Ա Ր Կ Ա Յ Ի Ն Օ Ր Ե Ն Գ Յ Ե Ց



Ուրբ

4

Վիճակագրական ծառայության տեղեկություններ

2012թ. ապրիլ ամսվա համար վիճակագրական ծառայություն տեղեկություններ ներկայացնելու վերջնաժամկետ:

Երբ

8

Տեղեկություն ՝ Հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ

2012թ. ապրիլ ամսվա ՀՂՄ-ով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկության վերջնաժամկետ («Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «ե» կետ):

Երկ

14

Անհատ ձեռնարկատերերի (ձեռներեցների) կողմից պարտադիր սոցիալական ապահովության վճարների վճարում

Անհատ ձեռնարկատերերի (ձեռներեցների) կողմից 2012թ. ապրիլ ամսվա համար նվազագույն պարտադիր սոցիալական ապահովության վճարների վճարման վերջնաժամկետ («Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետ):

ԱՎՈՒՄ-ի վճարման վերջնաժամկետ

Ապրիլ ամսվա աշխատավարձի վճարման վերջնաժամկետ (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մաս):

Երբ

15

Հաստատագրված վճարների ելակետային տվյալների մասին հայտարարություն ներկայացնելը

2012թ. ապրիլ ամսվա խաղարկությունով և ոչ խաղարկությունով, ինչպես նաև համակցված վիճակախաղերի իրականացման դեպքում հաստատագրված վճար վճարողների համար ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու վերջնաժամկետ («Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետ):

**Հաստատագրված վճարների վճարում**

2012թ. ապրիլ ամսվա հաստատագրված վճարների վճարման վերջնաժամկետ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետ):

Ուրբ

18

**Եկամտահարկի վճարում**

2012թ. ապրիլ ամսվա համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումներից պահված եկամտահարկի վճարման վերջնաժամկետ («Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդված),

Հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձանց 2012թ. ապրիլ ամսվան վճարած եկամուտներից պահված (գանձված) եկամտահարկի վճարման վերջնաժամկետ («Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդված)

**Շահութահարկի վճարում**

2012թ. ապրիլ ամսվա ընթացքում ոչ ռեզիդենտից գանձված շահութահարկի գումարների բյուջե վճարման վերջնաժամկետ («Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդված):

Երկ

21

**Պարտադիր սոցիալական ապահովության վճարների վճարում**

Գործատուների կողմից 2012թ. ապրիլ ամսվա պարտադիր սոցիալական ապահովության վճարի վճարման վերջնաժամկետ («Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետ):

**Ավելացված արժեքի հարկի հաշվարկի ներկայացնելը (այն անձանց համար, որոնց հաշվետու ժամանակաշրջանը համարվում է ամիսը)**

- 2012թ. ապրիլ ամսվա ԱԱՀ-ի հաշվարկի ներկայացնելու վերջնաժամկետ («Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդված),
- 2012թ. ապրիլ ամսում դուրս գրված և ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքի ներկայացնելու վերջնաժամկետ («Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդված):

**Ավելացված արժեքի հարկի վճարում(այն անձանց համար, որոնց հաշվետու ժամանակաշրջանը համարվում է ամիսը)**

2012թ. ապրիլ ամսվա համար հաշվարկված ԱԱՀ-ի վճարման վերջնաժամկետ («Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդված):

**Ակցիզային հարկի վճարում**

2012թ. ապրիլ ամսվա ակցիզային հարկի վճարման վերջնաժամկետ («Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ կետ):

**Հաստատագրված վճարների մասին տեղեկություններ ներկայացնելը**

Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից 2012թ. ապրիլ ամսվա ընթացքում իրենց կողմից իրացված գազի ֆիզիկական ծավալների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու վերջնաժամկետ («Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ կետ):

Հնգ

31

**Հաստատագրված վճարների ելակետային տվյալների մասին հայտարարություն ներկայացնելը**

2012թ. հունիս ամսվա տոտալիզատորի, ինտերնետ տոտալիզատորի և ինտերնետ շահումով խաղերի գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) մասով ելակետային տվյալների հայտարարության ներկայացնելու վերջնաժամկետ («Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, 2-րդ կետ):

# 2012 Թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀԻ ՄՐՅՈՒՅԹ

## II ՓՈՒԼ



«Գործք» ամսագիրը շարունակում է «2012 թվականի Հայաստանի Հանրապետության լավագույն հաշվապահի» անվանակարգում հայտարարված մրցույթը: Մրցույթի մասնակիցներին առաջարկվում է մեկ խնդիր: Խնդիրը բաղկացած է 4 հատ՝ «ա», «բ», «գ» և «դ» ենթահարցերից: «ա» ենթահարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 4 միավոր, «բ» ենթահարցի ճիշտ պատասխանը՝ 6 միավոր, «գ» և «դ» ենթահարցերը՝ 5-ական միավոր: Խնդրի առավելագույն միավորների թիվը կազմում է 20 միավոր:

Այսպես, խնդրից՝

- ✓ մինչև 6 միավոր հավաքելու դեպքում ունեք վերամասնագիտացման կարիք,
- ✓ 9 կամ 11 միավոր հավաքելու դեպքում՝ վերապատրաստման կարիք,
- ✓ 14 կամ 16 միավոր հավաքելու դեպքում՝ որակավորման բարձրացման կարիք,
- ✓ 20 միավոր հավաքելու դեպքում ունեք լավ որակավորում:

Խնդրից 16 կամ 20 միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում:

Ստորև ներկայացվող խնդրի պատասխաններն ուղարկել [press@gortsq.am](mailto:press@gortsq.am) էլեկտրոնային հասցեին մինչև 2012թ. մայիսի 30-ը: Խնդրի ճիշտ պատասխանները կտեղադրվեն [www.gortsq.am](http://www.gortsq.am) կայքէջում 2012թ. մայիսի 31-ին:

**ՈՒՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ** – Մրցանակաբաշխությունը տեղի կունենա 2013թ. փետրվարին՝ Ծաղկաձորում:

## «2012 Թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՅՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԽՆԴԻՐ

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի՝ 2011 թվականի ընթացքում իրականացրած գործարքների վերաբերյալ հայտնի է հետևյալը.

ա) 20.05.2011թ.-ին 12.0 մլն. ՀՀ դրամով «Գործք» ՍՊԸ-ին է օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող արտադրական նշանակության շինությունը, որը նա գնել էր 04.02.2011թ.-ին 8.5 մլն. ՀՀ դրամով:

բ) 08.08.2011թ.-ին 76.0 մլն. ՀՀ դրամով «X» ՓԲԸ-ին է օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող հասարակական նշանակության գույքը, որը նա գնել էր 20.01.2009թ.-ին անհատ ձեռնարկատեր չհանդիսացող մեկ այլ ֆիզիկական անձից՝ 55.0 մլն. ՀՀ դրամով (նշյալ ձեռքբերման գործարքի մասով առկա է միայն երկու ֆիզիկական անձանց միջև կնքված ու սահմանված կարգով նոտարական վավերացում ստացած՝ գույքի առքուվաճառքի պայմանագիր):

գ) 01.12.2011թ.-ին անձնական օգտագործման ավտոմեքենան, որը նա գնել էր երեք ամիս առաջ, փոխանակել է ընկերոջ ավտոմեքենայի հետ (երկու ավտոմեքենաների շուկայական արժեքները փոխանակման պահին կազմել են 6.0 մլն. ՀՀ դրամ, ֆիզիկական անձանց միջև կնքվել է գույքի փոխանակման պայմանագիր, որը սահմանված կարգով ստացել է նոտարական վավերացում):

դ) 20.12.2011թ.-ին 5.4 մլն. ՀՀ դրամով «Y» ՍՊԸ-ին է օտարել փոխանակված ավտոմեքենան:

Պահանջվում է որոշել ֆիզիկական անձի՝ ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունների մեծությունը՝ 2011 թվականի ընթացքում կատարված գործարքների մասով:

## «2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՅՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԽԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Գործք» ամսագրի կողմից հայտարարված «2012 թվականի ՀՀ լավագույն հաշվապահ» մրցույթի ընտրական առաջին փուլի վերաբերյալ 2012 թվականի փետրվարի 25-ից մինչև մարտի 16-ն ընկած ժամանակահատվածում [press@gortsq.am](mailto:press@gortsq.am) էլեկտրոնային հասցեով ստացվել է 127 պատասխան:

Հարցաշարից միավորները բաշխվել են հետևյալ կերպ՝

- ✓ 0 - 6 միավոր են վաստակել 32 մասնակից.
- ✓ 7-12 միավոր՝ 81 մասնակից.
- ✓ 15 -18 միավոր՝ 10 մասնակից.
- ✓ 19 և 20 միավոր են վաստակել 4 մասնակից:

### Հարցաշարից առավել բարձր միավորներ վաստակած մասնակիցներն են



**Մերի Սկրտչյան**  
«Ապրիկոտ քոնսալթինգ» ՍՊԸ-ի  
հաշվ. խմբի ղեկավար  
(20) միավոր



**Ելենա Ղամբարյան**  
«Ելենա Ղամբարյան» ԱԶ-ի  
գլխավոր հաշվապահ  
(20) միավոր



**Լուսինե Զուրարյան**  
ՀՀ կենտրոնական  
բանկի հաշվապահ  
(19) միավոր



**Արփիհեն Մխիթարյան**  
«Քասախ Ռեմդետալ» ՍՊԸ-ի  
գլխավոր հաշվապահ  
(19) միավոր



**Դավիթ Գասպարյան**  
«Էմ Ջի Էֆ» գրուպ ՍՊԸ-ի  
գլխ. մասնագետ  
(18) միավոր



**Վարսիկ Նազարյան**  
«Պռոշյանի կոնյակի  
գործարան» ՍՊԸ-ի  
գլխավոր հաշվապահ  
(18) միավոր



**Արթուր Բաղդասարյան**  
«Գրիտոի» ՍՊԸ-ի  
հաշվապահ  
(18) միավոր



**Ռուզաննա Ղավայան**  
«Կասկադ  
Ինվեստմենտս» ՓԲԸ-ի  
գլխավոր հաշվապահ  
(18) միավոր



**Արթուր Գևորգյան**  
«Էլեկտրասեմկավմոնտաժ», «Էլեկտրո-  
տեխնիկանան սարքավորումների  
մոնտաժման և կարգաբերման  
ծեղնարկություն» ՍՊԸ-ի  
գլխավոր հաշվապահ  
(18) միավոր



**Անուշ Հակոբյան**  
«Ռան-Օյլ» ՍՊԸ-ի  
գլխավոր հաշվապահ  
(17) միավոր



**Ալլա Բերուջանյան**  
«ԴԻ ԷՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ի  
գլխավոր հաշվապահ  
(17) միավոր




**Դավիթ Նիկողոսյան**  
«Գարանտ ըջաունթ  
քոնսալթինգ» ՍՊԸ-ի  
հաշվապահ  
(16) միավոր



**Մարգարիտա Խաչատրյան**  
«Վեգեբոմ» ՍՊԸ-ի  
գլխավոր հաշվապահ  
(16) միավոր



**Քրիստինա Քարամյան**  
Ազգային հիփոթեքային  
ընկերություն ՌԻՎԿ ՓԲԸ-ի  
գլխավոր հաշվապահ  
(15) միավոր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՆԱԽՈՒԾՈՒԹՅԱՆ  
ԻՐԱԳՄԱՆ**

## «ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԱՆԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄ»

### Յարգելի ընթերցող

«Գործք» ամսագիրը «Կադրային քաղաքականություն» բաժնում բացում է նոր էջ՝ «Աշխատանքային պայմանագրի լուծում» խորագրով, որտեղ պարբերաբար կներկայացվեն աշխատանքային պայմանագրի լուծման իրավական հիմքերը և դրանց իրավակիրառական առանձնահատկությունները:

### Խոսք փորձագիտական խմբի

Աշխատանքային հարաբերություններում կարելի է դեր ունի աշխատանքային պայմանագրի լուծումը: Այն բացասական ելքով գործընթաց է: Հակառակ հասարակության մեջ շրջանառվող կարծիքի (ոմանց թվում է, թե գործատուները շահագրգռված են աշխատողներին պարբերաբար աշխատանքից ազատելու հարցում) աշխատանքային պայմանագրի լուծմամբ շահագրգռված չէ աշխատանքային հարաբերությունների և ոչ մի մասնակից, քանի որ այն վնասում է, ինչպես գործատուին, աշխատողին, այնպես էլ պետությանը:

Աշխատողների համար աշխատանքից ազատվել նշանակում է կորցնել աշխատանքային եկամուտները, սասանել իր և իր ընտանիքի բարեկեցությունը և այլն: Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի համար տնտեսապես շահավետ չէ, եթե այն արտադրական անհրաժեշտություն չէ, քանի որ մնան դեպքերում ավելանում է աշխատանքից ազատվողի փոխարեն նոր աշխատող վարձելու համար գործատուի կողմից կատարվող տրանսակցիոն ծախսերը, մեծանում է նոր աշխատողի և կոլեկտիվի մյուս անդամների միջև նորմալ հարաբերություններ ունենալու ռիսկերը, որոշակի ժամանակ է պահանջվում, որպեսզի նոր աշխատողը ծանոթանա աշխատանքի կազմակերպման առանձնահատկություններին և այլն: Աշխատանքային պայմանագիրը լուծելիս պետությունը նույնպես կորուստներ է ունենում, քանի որ նվազում է հարկատուների թիվը, մեծանում է պետության նկատմամբ սոցիալական պահանջները (գործազրկության նպաստի, աղքատության ընտանեկան նպաստի տեսքով և այլն): Դա է պատճառը, որ աշխատանքային հարաբերությունների նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող պետական մարմինների ուշադրության կենտրոնում են գտնվում աշխատանքային պայմանագրի լուծման ամբողջ գործընթացը: Աշխատանքային հարաբերությունները գործատուի և աշխատողի միջև ազատ կամարտահայտությամբ ձեռք բերված համաձայնություն է: Հետևաբար, նրանք որևէ հանգամանքով, կաշկանդված չեն այն դադարեցնելու հարցում: Սակայն աշխատանքային պայմանագրի լուծման չկանոնակարգվածությունն անթույլատրելի է, քանի որ առանձին դեպքերում, աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ կողմերից յուրաքանչյուրի քմահաճ վերաբերմունքը կարող է վնասել մյուս կողմի իրավունքներն ու օրինական շահերը: Դա է պատճառը, որ աշխատանքային պայմանագրի լուծման իրավական հիմքերը, դրանց իրականացման կարգն ու պայմանները ենթարկվել են օրենսդրական խիստ կանոնակարգման:

Աշխատանքային պայմանագիրը լուծվում է կողմերի միջև ծանուցում (տեղեկատվություն) փոխանակելու միջոցով կամ էլ՝ առանց ծանուցման:

Ծանուցումն աշխատանքային հարաբերությանը վերաբերող կողմերից մեկի ապագա մտադրությունների մասին մյուս կողմին տեղեկատվություն տրամադրելու գործընթաց է, որի կարգն ու ժամկետները սահմանված են ՀՀ աշխատանքային օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք): Ծանուցումը մի դեպքում առաջարկություն է աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ (օրինակ կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում ներկայացվող ծանուցումը՝ այս դեպքում ծանուցման մեջ նշված պայմանները կրում են հայեցողական բնույթ), իսկ մյուս դեպքում ծանուցումն ունի իմպերատիվ բնույթ, այսինքն ծանուցման մեջ նշված պայմանները ենթակա են անվերապահ կատարման և կախված չէ ծանուցում ստացողի ցանկությունից: Օրինակ աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում գործատուին ներկայացվող ծանուցումը և այլն:

Աշխատանքային պայմանագիրը լուծվում է առանց ծանուցման, երբ բացակայում է աշխատանքային հարաբերությունները գործատուի և աշխատողի միջև ազատ կամարտահայտությամբ ձեռք բերված համաձայնություն է: Հետևաբար, նրանք որևէ հանգամանքով, կաշկանդված չեն այն դադարեցնելու հարցում: Սակայն աշխատանքային պայմանագրի լուծման չկանոնակարգվածությունն անթույլատրելի է, քանի որ առանձին դեպքերում, աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ կողմերից յուրաքանչյուրի քմահաճ վերաբերմունքը կարող է վնասել մյուս կողմի իրավունքներն ու օրինական շահերը: Դա է պատճառը, որ աշխատանքային պայմանագրի լուծման իրավական հիմքերը, դրանց իրականացման կարգն ու պայմանները ենթարկվել են օրենսդրական խիստ կանոնակարգման:

Աշխատանքային պայմանագիրը լուծվում է առանց ծանուցման, երբ բացակայում է աշխատանքային հարաբերությունները գործատուի և աշխատողի միջև ազատ կամարտահայտությամբ ձեռք բերված համաձայնություն է: Հետևաբար, նրանք որևէ հանգամանքով, կաշկանդված չեն այն դադարեցնելու հարցում: Սակայն աշխատանքային պայմանագրի լուծման չկանոնակարգվածությունն անթույլատրելի է, քանի որ առանձին դեպքերում, աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ կողմերից յուրաքանչյուրի քմահաճ վերաբերմունքը կարող է վնասել մյուս կողմի իրավունքներն ու օրինական շահերը: Դա է պատճառը, որ աշխատանքային պայմանագրի լուծման իրավական հիմքերը, դրանց իրականացման կարգն ու պայմանները ենթարկվել են օրենսդրական խիստ կանոնակարգման:

ԱՄՍԱԳՐԻ  
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ  
ՏԱՐԲԵՐԱԿ

ԱՄՍԱԳՐԻ  
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ  
ՏԱՐԲԵՐԱԿ

**3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՀԻՄՆԱՎՈՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏԵՍԱԿԵՐԸ**

Կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման գործընթացն ապահովող փաստաթղթերի տեսակներն են՝

1. **Ծանուցում**՝ գործատուից աշխատողին՝ կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին,
2. **Ծանուցում**՝ աշխատողից գործատուին (գործատուի ծանուցման պատասխանը)՝ կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին,
3. **Համաձայնագիր**՝ կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին,
4. **Աշխատանքից ազատման թերթիկ**՝ կազմակերպության նկատմամբ աշխատանքից ազատվողի պարտք ու պահանջի մասին,
5. **Հրաման**՝ կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին:

**4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՀԻՄՆԱՎՈՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ**

*Օրինակելի ձև*

**Կազմակերպության խորհրդանիշը  
և անվանումը**

**Տ Ն Օ Ր Ե Ն**

201-թ. ----- «-----»

**N** -----

----- - ի  
(նշել կազմակերպության անվանումը)  
-----  
(նշել ստորաբաժանումը, աշխատողի պաշտոնը)  
պարոն (տիկին) ----- - ին  
( նշել աշխատողի անունը, ազգանունը)

**Ծ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ**

Հարգելի պարոն (տիկին) \_\_\_\_\_

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղեկացնում եմ, որ 201\_\_թ. \_\_\_\_\_ « \_\_\_ » - ից ցանկանում եմ լուծել Ձեզ հետ 20\_\_թ. \_\_\_\_\_ « \_\_\_\_\_ »-ին կնքած թիվ --- աշխատանքային պայմանագիրը (գործատուի անհատական իրավական ակտով աշխատանքի ընդունված աշխատողի դեպքում գրվում է «աշխատանքից ազատելու են») :

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ առաջարկության հետ համաձայնվելու դեպքում Ձեզ կվճարվի հատուցում՝ ----- գումարի չափով:

**Տնօրեն**

-----  
(ստորագրություն)

201-թ. ----- «-----»

Ծանուցումը ստացա՝

-----  
(ստորագրություն)

201-թ. ----- «-----»



Օրինակելի ձև

**Գրություն Կազմակերպության տնօրենին**  
(գրությունը ներկայացվում է աշխատողը, երբ նա ցանկանում է ազատվել աշխատանքից կողմերի համաձայնությամբ)

----- - ի տնօրեն  
(նշել կազմակերպության անվանումը)  
պարոն (տիկին) ----- -ին  
(նշել անունը, ազգանունը)  
----- - ից  
(նշել աշխատողի անունը, ազգանունը)

**Ծ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ**

Հարգելի պարոն (տիկին) -----  
Հայտնում եմ Ձեզ, որ համաձայն եմ՝ յոթ (վեց, հինգ չորս և այլն) օր առաջ Ձեր կողմից 201-թ. ---  
«--» -ի ծանուցմամբ ներկայացրած 20--թ. -----«---» -ի թիվ -- աշխատանքային պայմանագիրը  
լուծելու (գործատուի անհատական իրավական ակտով աշխատանքի ընդունված աշխատողի դեպքում  
գրվում է «համաձայն եմ աշխատանքից ազատվելու») վերաբերյալ առաջարկությամբ:

Կազմակերպության աշխատակից՝  
-----  
(անուն ազգանուն) \_\_\_\_\_ (ստորագրություն)  
**201-թ. ----- «-----»**

Օրինակելի ձև

**Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր Ն --**  
**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**  
201-թ. ----- «-----» ք. -----

----- (նշել կազմակերպության անվանումը) (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս տնօրեն -----  
-----, մի կողմից և ----- (նշել աշխատողի անունը, ազգանունը, պաշտոնը) (այսուհետ՝  
Աշխատող), մյուս կողմից, (----- և Աշխատողը միասին այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն  
համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ՝ 20--թ. ----- «---» -ին լուծում են Կողմերի միջև  
20--թ. ----- «---» -ին կնքված թիվ --- աշխատանքային պայմանագիրը (գործատուի անհատական  
իրավական ակտով աշխատանքի ընդունված աշխատողի դեպքում գրել՝ «Կողմերը համաձայնվում են  
աշխատողին ազատել աշխատանքից» արտահայտությունը):

2. Կողմերը համաձայնում են աշխատողին տրամադրել չօգտագործված ամենամյա արձակուրդը՝ ----  
աշխատանքային օր տևողությամբ և աշխատանքային պայմանագրի լուծման օր համարել 20- թ. -- «--» -ը  
(կարող է նաև այս պայմանը չգրվել)<sup>6</sup>:

3. Ընկերությունը պարտավորվում է աշխատողին վճարել հատուցում -----  
(նշել շաբաթական, ամսական և այլն)

միջին աշխատավարձի չափով (կարող է նշվել հատուցման այլ չափեր և այլ ձևեր):

4. 201- թ. ----- « --- » -ին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել լրիվ  
վերջնահաշվարկ և վճարել ս/թ ----- -ին:

5. Սույն համաձայնագիրը կազմված է 2 օրինակից՝ մեկը պահպանվում է -----  
(նշել կազմակերպության անվանումը),

իսկ մյուսը տրվում է աշխատողին: Երկու օրինակն էլ ունեն մույն իրավաբանական ուժը:

6. Կողմերի ստորագրությունները՝  
Տնօրեն՝ \_\_\_\_\_ Աշխատող՝ \_\_\_\_\_  
----- (ստորագրություն) ----- (ստորագրություն)

ԿՏ

<sup>6</sup> Այս դրույթի անհրաժեշտությունը բխում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից և ի կատարումն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 168-րդ հոդվածի պահանջների:

ԱՄՍԱԳՐԻ  
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ  
ՏԱՐԲԵՐԱԿ



Օրինակելի ձև

**Կազմակերպության խորհրդանիշը  
և անվանումը**

**Տ Ն Օ Ր Ե Ն  
Հ Ր Ա Մ Ա Ն Ն --Ա**

201-թ. ----- «-----»

թ. -----

**ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ----- Ի ՀԵՏ**

(նշել աշխատողի անունը, ազգանունը, պաշտոնը)

**ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 110-րդ հոդվածի դրույթներով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ**

1. Աշխատակազմի կառավարման բաժնի պետ----- -- ին՝

201-թ. \_\_\_\_\_ « \_\_\_ » - ին լուծել ----- (նշել կազմակերպության անվանումը) և ----- -ի

(նշել աշխատողի անունը, ազգանունը, պաշտոնը)

միջև 20-թ. \_\_\_\_\_ « \_\_\_ » - ին կնքված թիվ ---աշխատանքային պայմանագիրը (կամ ----- -ին  
(նշել աշխատողի անունը, ազգանունը)

201-թ. ----- «-----»-ին ազատել աշխատանքից):

2. Վերջին աշխատանքային օր համարել 201-թ. ----- «-----»- ը :

3. Գլխավոր հաշվապահ ----- - ին՝

ա) վճարել հատուցում՝ ----- միջին աշխատավարձի չափով՝

(նշել շաբաթական, ամսական և այլն)

հիմք ընդունելով աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը:

բ) 201-թ. \_\_\_\_\_ « \_\_\_ »-ին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել լրիվ վերջնահաշվարկ և  
վճարել 201-թ. ----- «-----»- ին :

4. Աշխատակազմի կառավարման բաժնի պետ----- -- ին՝ աշխատանքից  
ազատված ----- -ի անձնական գործն արխիվացնել սահմանված կարգով:

(նշել աշխատողի անունը, ազգանունը)

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում սույն հրամանում նշված աշխատողներին հրազեկելու պահից:

Հիմք՝ ----- (նշել կազմակերպության անվանումը) և ----- ի միջև

(նշել աշխատողի անունը, ազգանունը, պաշտոնը)

201-թ. ----- «-----» -ին ստորագրված թիվ --- համաձայնագիրը:

Տնօրեն

-----

(ստորագրություն)

201-թ. ----- «-----»

ԿՏ

Հրամանը ստացել են

-----

(ստորագրություն)

201-թ. ----- «-----»



# ՀԱՐՑ ՈՒ

**Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն ՈՒ Մ Ե Ն**

## ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Ե «ԳՈՐԾՔԻ» ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

(Ընթերցողների հարցերը ներկայացվում են առանց խմբագրման)

Հարցադրումներ կատարած անձանց խնդրանքով նրանց անունները չեն հրապարակվում:

### Հարց 1.

Որո՞նք են «որակավորման բարձրացում» և «վերապատրաստում» տերմինների տարբերությունները:

### Պատասխան 1.

«Որակավորման բարձրացում»-ը և «վերապատրաստում»-ը կրթական տարբեր նպատակներ հետապնդող ուսումնական ծրագրերի անվանումներ են: Որակավորման բարձրացումը սովյալ մասնագիտության շրջանակներում անձի որոշակի աշխատանքներ կատարելու հմտությունների և կարողությունների կատարելագործման գործընթաց է (օրինակ, եթե խառատի 5-րդ կարգի

որակավորում ունեցողը, ցանկանում է ձեռք բերել 6-րդ կարգի որակավորում, ապա նա պետք է մասնակցի որակավորման բարձրացման դասընթացների), իսկ վերապատրաստումը՝ անձի ունեցած մասնագիտությունից տարբեր նոր մասնագիտություն ձեռք բերելու գործընթաց է (օրինակ, եթե խառատը ցանկանում է փոխել մասնագիտությունը և դառնալ ֆրեզերագործ, ապա պետք է մասնակցի վերապատրաստման դասընթացների և այլն):

### Պատասխան 2.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 90-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ աշխատանքային գրկույկում գրառվում է միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում առկա ուսման և պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ժամանակահատվածները (երկու դեպքում էլ այդ մասին լրացում կատարում է այն գործատուն, որի մոտ անձն անցել է աշխատանքի ուսումնական հաստատությունն ավարտելուց և/կամ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից գորացրվելուց հետո): Օրենսգրքի այսպահանջը նույնությամբ իրացվել է ՀՀ կառավարության 2006թ.-ի հունիսի 16-ի «Աշխատանքային գրքույկ վարելու, աշխատանքային գրքույկի կրկնօրինակ տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 876 -Ն որոշման 10-րդ կետում:

Քանի որ Դուք եք այն գործատուն, ում մոտ անձն անցնում է աշխատանքի ուսումնական հաստատությունը և պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունն ավարտելուց հետո, հետևաբար դուք էլ պարտավոր եք աշխատողի աշխատանքային գրքույկում կատարել երկու ժամանակահատվածների մասին համապատասխան գրառումները:

### Հարց 2.

Եթե մեր կազմակերպությունում աշխատանքի են ընդունում ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո զինվորական ծառայության մեկնած և զորացրված անձին, ապա աշխատանքային գրքույկում պետք է գրանցեն ուսումնական հաստատությունում սովորելու, զինվորական ծառայության մեջ գտնվելու ժամանակահատվածների մասին տեղեկությունները, թե՞ լրացման ենթակա է դրանցից միայն վերջինը:

ԱՄՍԱԳՐԻ  
ՉՈՒՉԱԳՐԱԿԱՆ  
ՏԱՐԲԵՐԱԿ

գործընթացի տարբեր փուլերում, նախնական հսկողության ենթակա գործարքներից կախված, դրանց պատասխանատուները տարբեր են: Օրինակ՝

- պատասխանատու ստորաբաժանումը հսկողություն է իրականացնում պայմանագրի կողմի (կապալառու, մատակարար և այլն)՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ և ընդունում է պայմանագրի կատարման արդյունքը:

- գնումները համակարգողը եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ, ապահովում է գնման ընթացակարգի և դրան առնչվող փաստաթղթերի համապատասխանությունը գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին և այլն:


Այլ կերպ ասած, եթե նախնական հսկողության կոնկրետ պատասխանատու սահմանված չէ, ապա որևէ գործարքի նախնական հսկողության պատասխանատուն տվյալ գործարքը իրականացնող և/կամ այդ գործարքի առնչությամբ որոշում կայացնելու լիազորություն ունեցողն է, քանզի վերջինս պարտավոր է տվյալ գործարքը իրականացնել այդ գործարքի կատարման համար սահմանված պայմաններին համապատասխան: Այսինքն՝ գործարքի պատասխանատուն, մինչև գործարքի փաստացի իրականացումը, պետք է ինքնուրույն գնահատի և ապահովի այդ գործարքի օրինականությունը և համապատասխանությունը սահմանված պայմաններին:

Կարեն Բրուտյան, տգթ  
 “Ինտեր Լիմենս” ՓԲԸ-ի խորհրդի նախագահ

**Պատասխան 6.**

Ձեր հարցն իր մեջ երկու ենթահարց է պարունակում: Դրանց անդրադառնանք առանձին-առանձին: Նախ ասենք, որ բոլոր դեպքերում ընտրական հանձնաժողովներում ընդգրկված աշխատողը հիմնական աշխատավայրում ազատվում է աշխատանքային պարտականությունների կատարումից: Այդ ընթացքում աշխատողին վճարվում է միջին աշխատավարձ, որը հաշվարկվում է հիմք ընդունելով միջին ժամային աշխատավարձը, եթե աշխատանքային պարտականությունների կատարումից ազատված ժամանակահատվածը չի գերազանցում մեկ շաբաթը և միջին օրական աշխատավարձը, եթե աշխատանքային պարտականությունների կատարումից ազատված ժամանակահատվածը գերազանցում է մեկ շաբաթը (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 175-րդ հոդված):

Ինչ վերաբերում է Ձեր այն հարցին, թե ո՞ր կազմակերպությունը պետք է վճարի, ապա ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասի՝ պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար (ընտրական իրավունքն իրականացնելիս և այլն) աշխատանքային պարտականությունների կատարումից ազատված աշխատողի միջին աշխատավարձը վճարում կամ հատուցում է այն կազմակերպությունը (մարմինը), որի առաջադրած պարտականությունները կատարում է աշխատողը, իսկ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների միջին աշխատավարձը վճարվում է աշխատողի հիմնական աշխատատեղից, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:



## «2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ- ՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՄՐՑՈՒՅԹԻ II ՓՈՒԼ

«Գործք» ամսագիրը շարունակում է «2012 թվականի Հայաստանի Հանրապետության մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ» անվանակարգում հայտարարված մրցույթը:

Մրցույթի երկրորդ փուլին ներկայացվում է մեկ խնդիր և կառավարչական հմտությունների ստուգմանը վերաբերող մեկ թեստ:

Խնդրում գիտակցաբար տեղ են գտել աշխատանքային օրենսդրության պահանջներից չբխող և հակասական պարբերություններ, որոնք որևէ կապ չունեն աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրության հետ: Անհրաժեշտ է գտնել սխալները և հուշել գործատուին՝ վարչական պատասխանատվությունից նրան զերծ պահելու համար: Յուրաքանչյուր հայտնաբերված սխալ կգնահատվի 1 միավոր:

Թեստային առաջադրանքը բաղկացած է առավելագույնը 30 միավորից:

Խնդրից և թեստային առաջադրանքից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Ստորև ներկայացվող թեստային առաջադրանքի և խնդրի պատասխաններն ուղարկել մինչև 2012թ. մայիսի 30-ը՝ [press@gortsq.am](mailto:press@gortsq.am) էլեկտրոնային հասցեին: Խնդրի և թեստային առաջադրանքի ճիշտ պատասխանները կտեղադրվեն [www.gortsq.am](http://www.gortsq.am) կայքէջում՝ 2012 թվականի մայիսի 31-ին:

**ՌԵՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ** – Մրցանակաբաշխությունը տեղի կունենա 2013թ. փետրվարին՝ Ծաղկաձորում:

### ԽՆԴԻՐ «ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼԻ

Աշխատանքային փորձ չունեցող անձը, հնգօրյա աշխատանքային շաբաթվա ռեժիմի պայմաններով աշխատանքի է ընդունվել «Գործք» ՍՊԸ-ում, որպես ներկարար՝ ամսական 80.000 դրամ աշխատավարձով: Նրա հետ որոշակի ժամկետով կնքված ժամանակավոր աշխատանքային պայմանագրում (պայմանագրի գործողության ժամկետը սահմանվել է 1 տարի) նախատեսվել է փորձաշրջան՝ 2 ամիս ժամ-

կետով: Աշխատանքի ընդունվելուց մեկ ամիս հետո հիվանդության պատճառով 1.5 ամիս ստացիոնար պայմաններում բուժում ստանալու նպատակով գտնվել է հիվանդանոցում: Աշխատանքային գործընկերները հիվանդին տեսակցության ժամանակ նրան են փոխանցել տնօրենի հրամանը, որով նա տեղեկացել է, որ փորձաշրջանի ընթացիկ արդյունքները բավարար գնահատվելու պատճառով ինքը համարվել է հիմնական աշխատող, իսկ փորձաշրջանի ժամկետն ավարտվելու կապակցությամբ նրա հետ կնքված որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիրը դարձել է կնքված անորոշ ժամկետով:

Ապաքինվելուց հետո աշխատողը գործատուին է ներկայացրել ժամանակավոր անաշխատունակության քերթիկ, որի հիման վրա գործատուին աշխատողին վճարել է նպաստ՝ աշխատանքային բոլոր օրերի համար, բացառությամբ առաջին աշխատանքային օրվա:

Ութ ամիս աշխատելուց հետո աշխատողը գործուղվել է կարբիտի գործարան՝ վերջինիս տնօրենի հրավերով: Գործուղման քերթիկի «ժամանման» մասը լրացնելուց, ստորագրելուց և կնքելուց հետո միայն, գործուղման վայրի գործատուին թույլ է տրվել աշխատողին անցնելու գործուղման նպատակից բխող իր պարտականությունների կատարմանը: Գործուղման ժամկետը ավարտվելուց և սահմանված կարգով գործուղման քերթիկը լրացվելուց հետո աշխատողը վերադարձել է հիմնական աշխատանքի վայր՝ 2 օր ուշացումով: Անհարգելի բացակայության համար աշխատողին հայտարարվել է նկատողություն և որպես կարգապահական տույժի կիրառման միջոց աշխատավարձը նվազեցվել է 10 %-ի չափով: Բացակա օրերը լրացնելու համար տնօրենի հրամանով աշխատողը 6 ժամ տևողությամբ, ներագրավել է հանգստյան օրը (շաբաթ օրը) աշխատանքի, որի համար նրա համար հաշվարկվել է աշխատավարձ՝ միջին օրական աշխատավարձի կրկնակիի չափով:

## **ԹԵՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ** **«ՍԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»** **ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼԻ**

### **ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԹԵՏ՝ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄ**

Առաջնորդումն այլ անձանց վարքագծի վրա ներազդելու միջոցով նրանց գործունեության կանոնակարգման կարողություն է՝ կազմակերպության (խմբի, հանրության և այլն) նպատակներն ու խնդիրներն իրագործելու համար:

Ղեկավարները պետք է զարգացնեն առաջնորդելու իրենց հմտությունները, որպեսզի կարողանան ազդել ենթակամների վարքագծի վրա՝ նպատակաուղված արդյունքներ ապահովելու նպատակով:

Կառավարչական հմտությունների ստուգման այս թեստը լավագույն հնարավորությունն է, որոշելու Ձեր առաջնորդության մակարդակը: Ձեզ կառաջադրվի 30 հարց, որոնցից յուրաքանչյուրի հետ կտրվի պատասխանի երկու տարբերակ: Ընտրեք դրանցից մեկը և այդ մասին լրացում կատարեք ստորև տրված աղյուսակում՝ նշելով «ա» կամ «բ»: «ա» և «բ» պատասխանները գնահատվում են 1 կամ 0 միավորներով: Դժվար է ասել, թե ով է առավել շատ տիրապետում առաջնորդի հմտություններին՝ նրանք, ովքեր թեստային առաջադրանքից հավաքել են բարձր, թե նրանք, ովքեր հավաքել են ցածր միավորներ:

Այսպես.

**1. Հաճա՞խ եք լինում շրջապատի ուշադրության կենտրոնում՝**

ա) այո,

բ) ոչ:

**2. Համաճա՞յն եք, որ ձեր շրջապատից շատերը զբաղեցնում են ավելի բարձր պաշտոն, քան դուք՝**

ա) այո,

բ) ոչ:

**3. Երբ դեռ երեխա էիք, ձեզ դո՞ւր եր գալիս դեկավարել կրտսեր ընկերների խաղերը՝**

ա) այո,

բ) ոչ:

**4. Մեծ բավականություն ստանո՞ւմ եք, երբ ձեզ հաջողվում է համակարծիք դարձնել ինչ-որ մեկին, ով մինչ այդ հակառակվում էր ձեզ՝**

ա) այո,

բ) ոչ:

**5. Եղե՞լ են դեպքեր, երբ ձեզ անվճռական մարդ են անվանել՝**

ա) այո,

բ) ոչ:

**6. Համաձայն եք այս ձևակերպմանը. «Աշխարհում ամեն օգտակար բան բացառիկ անհատականությունների ստեղծածն է»՝**

ա) այո,

բ) ոչ:

**7. Ջգո՞ւմ եք արդյոք խորհրդատուի անհրաժեշտություն, ով կարող է ուղղորդել ձեր մասնագիտական ներուժն ու ակտիվությունը՝**

ա) այո,

բ) ոչ:

**8. Հա՞ծափս եք կորցնում սառնասրտությունը մարդկանց հետ զրուցելիս՝**

ա) այո,

բ) ոչ:

**9. Ձեզ հա՞ճույք պատճառո՞ւմ է այն, երբ նկատում եք, որ շրջապատի մարդիկ մի փոքր վախեցնում են ձեզանից՝**

ա) այո,

բ) ոչ:

**10. Բոլոր իրավիճակներում (աշխատանքային ժողով, ընկերական հավաքույթ) փորձո՞ւմ եք սեղանի շուրջ այնպես նստել, որ հեշտ լինի դրությունը վերահսկել և սեփական անձի շուրջ որոշակի ուշադրություն հրավիրել՝**

ա) այո,

բ) ոչ:

**11. Ի՞նչ եք կարծում, ձեր արտաքինը թողնո՞ւմ է արդյոք ազդեցիկ (իմպոզանտ) տպավորություն՝**

ա) այո,

բ) ոչ:

**12. Ձեզ երազկոտ համարո՞ւմ եք՝**

ա) այո,

բ) ոչ:

**13. Շփոթվո՞ւմ եք, երբ շրջապատողները ձեզ հետ համակարծիք չեն՝**

ա) այո,

բ) ոչ:

**14. Ո՞ւմ հետ եք նախընտրում աշխատել՝**

ա) հնազանդ մարդկանց հետ,

բ) կամակոր, անսամձ մարդկանց հետ:

ԱՄՍԱԳՐԻ  
ՉՈՒՉԱԴՐԱԿԱՆ  
ՏԱՐԲԵՐԱԿ

**28. Երբ երիտասարդ էիք, ի՞նչ մասնագիտություն էիք ցանկանում ունենալ՝**

- ա) հայտնի նկարիչ, երգահան, բանեստեղծ և այլն,
- բ) դիրիժոր, տիեզերագնաց և այլն:

**29. Ինչպիսի՞ երաժշտություն եք նախընտրում**

- ա) հանդիսավոր, հնչեղ,
- բ) հանգիստ, լիրիկական:

**30. Ունենո՞ւմ եք արդյոք լարվածության զգացում ազդեցիկ անձանց հանդիպելիս՝**

- ա) այո,
- բ) ոչ:

Հարց	Ձեր պատասխանը	Հարց	Ձեր պատասխանը
1		16	
2		17	
3		18	
4		19	
5		20	
6		21	
7		22	
8		23	
9		24	
10		25	
11		26	
12		27	
13		28	
14		29	
15		30	

**«2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

«Գործք» ամսագրի կողմից հայտարարված «2012 թվականի Հայաստանի Հանրապետության մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ» մրցույթի ընտրական առաջին փուլի վերաբերյալ 2012 թվականի փետրվարի 25-ից մինչև մարտի 16-ն ընկած ժամանակահատվածում [www.gortsq.am](http://www.gortsq.am) էլեկտրոնային հասցեով ստացվել է 93 պատասխան:

Հարցաշարից միավորները բաշխվել են հետևյալ կերպ՝

- ✓ 0 - 6 միավոր են վաստակել 0 մասնակից.
- ✓ 7-12 միավոր՝ 36 մասնակից.
- ✓ 13 -19 միավոր՝ 48 մասնակից.
- ✓ 20 և բարձր միավոր են վաստակել 8 անհատներ և 8 մասնակցից բաղկացած 1 խումբ:

**Թեստային առաջադրանքի դրական և բացասական պատասխանների միավորները**

Հարց	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Այո (+)	1	0	0	0	2	1	1	0	1	1	0	0	0	2
Ոչ (-)	0	1	1	2	0	0	0	2	0	0	2	1	2	0

**«2012 թ. 33 մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ» մրցույթի առաջին փուլի հարցաշարից և թեստային առաջադրանքից առավել բարձր միավոր վաստակած մասնակիցները**



**Սոնա Դարալյան**  
«LS-ՊԻՐԿԱԼ» ՓԲԸ-ի  
Կադրերի բաժնի պետ  
(25) միավոր



**Լիլիկ Թումանյան**  
«Միջազգային Կարմիր խաչի  
անվ. պոլիկլինիկա» ՓԲԸ-ի  
կադրերի բաժնի վարիչ  
(24) միավոր



**Լիլիա Համբարձումյան**  
«Կապանի պետական  
բժշկական քոլեջ» ՊՈԱԿ -ի  
կադրերի բաժնի տեսուչ:  
(24) միավոր



**Վաղեղիմիր Ավճյան**  
Զարենցավանի «Ձուկակենտրոն» ԲԲԸ-ի  
Էկոնոմիկական ծառայության պետ  
(23) միավոր



**Ակադեմիայի ուսանողներ**  
(23) միավոր



**Տաթևիկ Հովսեփյան**  
«Վանաձորի ծովակալ Խակոբյի անվան  
N2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի  
տնօրեն  
(23) միավոր



**Վագգեն Հայրապետյան**  
«Զանգեզուրի պոլնձամուլիբդենային  
կոմբինատ» ՓԲԸ-ի  
կադրերի գծով առաջատար ինժեներ  
(22) միավոր




**Լուսինե Զուրաբյան**  
33 կենտրոնական բանկի  
հաշվապահ  
(22) միավոր



**Անահիտ Լեփեյան**  
Մատենադարանի  
կադրերի բաժնի պետ  
(20) միավոր

# Խ Բ Ա Ռ Չ



1. Արժեքների տոկոսադրույքների տարբերությունը նշելու համար օգտագործվող տերմին, 2. գույքային իրավունքները հաստատող փաստաթուղթ, 3. օգտագործման ոչ պիտանի արտադրանք, 4. բաժնետիրական ընկերության խորհրդի ղեկավար, 5. հաշվապահական գործարք, որով վերացվում կամ նվազեցվում է որոշակի գույքային պահանջ, 6. գանձապետարանի կողմից թողարկվող արժեթուղթ, 7. կառավարչական գործառույթներով լիազորված անձ, 8. արևմտյան երկրների պետական պաշտոնյա, 9. աշխատավարձի պահանջ չներկայացնող աշխատող, 10. կարգապահական տույժ, 11. սահմանված չափ կամ քանակ, 12. ֆինանսական անալիզ, հաշվապահական վերահսկողություն, ֆինանսատնտեսական գործունեության ստուգում, 13. սակագին, 14. դեբիտորական պարտքերը երրորդ կողմին վաճառելուց զրոյացած միջոցների հաշվին կարճաժամկետ ֆինանսավորում, 15. քաղաքացիական իրավունքում պարտավորության ապահովման ձև, 16. պատասխանատվության տեսակ, 17. ապրանքների ներսերունդ երկրի մաքսային տարածք, 18. ատոմային էներգիայի միջազգային կազմակերպություն, 19. դրամի թողարկման արդյունքում կանխիկ և անկանխիկ շրջանառության մեջ գտնվող դրամական զանգվածի ավելացում, 20. հիմնական ակտիվների արժեքի աստիճանական նվազեցումը տարիների ընթացքում, 21. պարտապանի անվճարունակության պատճառով չզանձվող դեբիտորական պարտք, 22. տնտեսության մեջ գների ընդհանուր մակարդակի բարձրացումը, 23. ապրանքի վաճառքը՝ հետագայում վճարելու պայմանով, 24. բաժնետիրական կապիտալի և փոխառու դրամական միջոցների միջև եղած հարաբերակցություն, 25. գույքի հրապարակային վաճառք, 26. աշխատանքի վարձատրության անսական չափ, 27. քանակական սահմանափակում, 28. որևէ գործողության՝ աշխատանքի ձևը, կերպը, եղանակը, 29. գործադուլն անօրինական ճանաչող մարմին, 30. գործնական ծրագրերի նախնական ֆինանսական պլան, 31. աշխատանքային պայմանագրի լուծման ժամանակ կատարվող գործողություն, 32. գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողների հանրույթ, 33. առաջադրված և չբավարարված պահանջ:

### 27-րդ համարի խաչբառի պատասխանները

**Ստորադրյալ, 2. լոտ, 3. տարկետում, 4. միգրացիա, 5. ալիմենտ, 6. տեմպ, 7. պահանջարկ, 8. կոնվենտ, 9. տեսուչ, 10. չեկ, 11. կատարածու, 12. ուռճացում, 13. մենաշնորհ, 14. հաշիվ, 15. վարկ, 16. կոնսոլ, 17. լեզալ, 18. լուծարք, 19. քվանթ, 20. թոշակ, 21. կրուգերանդ, 22. դիտորդ, 23. դեֆոլտ, 24. տեսակետ, 25. տեսուչ, 26. չեզոք, 27. քաղաքագլուխ, 28. խմբագարական, 29. նիշ:**

**ԱՐԶԱԳԱՆՔ**  
ՇՈՒՐՋՕՐՅԱ ՌԱԴԻՈԿԱՅԱՆ

**FM**

**103'5**

Ձեզ հետ, Ձեզ համար...



Հեռ./ֆաքս՝ +374 10 65 00 14, +374 10 65 29 31  
ՀՀ, 0047, Երևան, Արմենակ Արմենակյան 250, 8-րդ հարկ («Նաիրի» հյուրանոցի շենքում)  
[www.ardzagank.com](http://www.ardzagank.com)

# «ԳՈՐԾՔ» ՍՊԸ-Ի «ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ» ՅՐԱՎԻՐՈՒՄ Է ՍՈՎՈՐԵԼՈՒ



«Աշխատակազմի կառավարման ակադեմիան» կազմակերպում է ուսուցում՝ հետևյալ մասնագիտությունների գծով.

- ✓ «Աշխատակազմի ղեկավար»
- ✓ «Կադրային գործավար»
- ✓ «Հաշվապահական հաշվառում»

«Աշխատակազմի կառավարման ակադեմիան» ավարտած անձինք կկարողանան իրականացնել՝

- ✓ Արդյունավետ կառավարում
- ✓ Անսխալ կադրային գործավարություն
- ✓ Անթերի հաշվապահական հաշվառում



**«Աշխատակազմի կառավարման ակադեմիայում»  
դասավանդում են առաջատար մասնագետներ**

**Դասընթացները կազմակերպվում են տեխնիկապես  
հագեցած պայմաններում՝ ուսուցման ժամանակակից  
մեթոդներով**

Հասցե՝ ք. Երևան, Սարմենի 1, 2/1 տարածք, 0009  
Հեռ.՝ (010) 56 18 56, 519 005, 519 008

Էլ. փոստ՝ [gortsq@gortsq.am](mailto:gortsq@gortsq.am), [press@gortsq.am](mailto:press@gortsq.am)  
[www.gortsq.am](http://www.gortsq.am), [www.press.gortsq.am](http://www.press.gortsq.am)